ԼՂԻՄ ՆԳՎԱՈՒՄ

Հոկտեմբերի 6-ի լույս 7-ի գիշերը անպատասխանատու, հանցավոր տարրերը փորձել են ազգամիջյան կոնֆլիկտ հրահրել Ստեփանակերտ քաղաքի Կրկժան թաղամասում։ Ինանկոթյան շրջանում լուրեր են տարածվել խաղաղ բնակիչների վրա իբր թե պատ թափվող հարձակման մասին։ Դրան հիվանդագին են արձագանքել ինչպես հայ, այնպես էլ ադրբեջանական ազգության մի խումբ անձինք, ինչը էլ հանգեցրել է որսորդական հրացանից անընշանակ ոռ հրաձգության։ Դրա հետևանքով թեթևակի վիրավորվել են քաղաքացիներ Հովհաննես Արտաշի Ա-թաղանը և Սալեհ Հյուսանին։ Գույու օղլի Ծուքյուրովը։ Տուժածներին բժշկական օգնություն է ցույց տրվել։

Հակաիրավական գործողությունները խափանվել են ներքին գործերի մարմինների աշխատակիցների և ներքին գործերի զինծառայողների կողմից։ Տվյալ դեպքի առթիվ հետաքննությունը տանում է ԼՂԻՄ դատախազությունը և ներքին գործերի վարչությունը։

Անհրաժեշտ է նշել, որ այս սուր իրավիճակում քաղաքի և Կրկժանի բնակիչների ճնշող մեծամասնությունը տոկունություն և խելամտություն է դրսևորել՝ չենթարկվելով անպատասխանատու անձանց կողմից հրահրված պրովոկացիային, որոնք գիտակցաբար շինչ կացնում են իրադրությունը մարզկենտրոնում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի՝ Լեռնային Ղարաբաղի հանձնաժողովի աշխատանքի նախաշեմին։ Բնակչության խելամիտ վարքագիծը այն փաստի ճիշտ ըմբռնման արդյունք է, թե ազգամիջյան պրոբլեմները կարելի է լուծել միայն դեմոկրատական սահմանադրական ճանապարհով, ինչպես որ կենտրոնական հեռուստատեսությամբ իր ելույթում նշել է Միխայիլ Սերգեևիչ Գորբաչովը։

Ներկայիս ոչ դյուրին իրադրությունում ուզում ենք դիմել մեր հայրենակիցների հոգուն ու մտքին։ Իրավապահ մարմինները հուսով են, որ քաղաքի բնակիչները կօգնեն միջադեպի տարրերի անձը հաստատելու գործում՝ ի շահ նոր պրովոկացիաների կանխարգելման։ Այդպիսի ինֆորմացիա ունեցող բոլոր քաղաքացիներին կոչ ենք անում այն մեզ հաղորդել 4-49-25 կամ 4-14-88 հեռախոսահամարներով։ Համոզված ենք, որ առողջ բանականությունը մեզ բոլորին կօգնի թույլ չտալ Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի լուծումը բարդացնող նոր հակահասարակական դրսևորումներ։